

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության, Գյումրու քաղաքապետարանի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև ս.թ. նոյեմբերի 28-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ. Տրանշ Բ» դրամաշնորհային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**



(Գործառնություն թիվ 46540)

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
(«ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ», Տրանշ B)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամից  
ներդրումային դրամաշնորհի առնչությամբ

Ամսաթիվ 28 նոյեմբերի 2019թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I – ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	2
Բաժին 1.01   Սահմանումներ.....	2
Բաժին 1.02   Մեկնաբանություն .....	6
ՀՈԴՎԱԾ II - ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ .....	6
Բաժին 2.01 Գումարը, արժույթը և նպատակը.....	6
Բաժին 2.02   Մասհանումներ.....	7
Բաժին 2.03   Փոխատուցման պայմանական և անվերապահ պարտավորությունները .....	10
Բաժին 2.04   Պետության կողմից չեղյալ հայտարարում .....	11
Բաժին 2.05   Վճարումներ.....	11
ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	11
Բաժին 3.01   Համագործակցություն և տեղեկատվություն .....	11
Բաժին 3.02   Ծրագրի իրականացման հետ կապված պարտականությունները	12
Բաժին 3.03   Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանություն .....	13
Բաժին 3.04   Պետության՝ աջակցություն ցուցաբերելու պարտականությունները	13
Բաժին 3.05   Ծրագրի իրականացման թիվ .....	14
Բաժին 3.06   Գնումներ .....	14
Բաժին 3.07   Ծրագրի փաստաթղթերն ու հաշվետվությունները; ստուգումներ. 14	
ՀՈԴՎԱԾ IV - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ....	16
Բաժին 4.01 Ֆինանսական փաստաթղթեր և հաշվետվություններ .....	16
Բաժին 4.02   Բիզնեսի և գործառնությունների վարման կարգը.....	17
Բաժին 4.03   Հարկեր.....	17
Բաժին 4.04   Տեսանելիություն .....	17
Բաժին 4.05   Խարդախություն և կոռուպցիա .....	18
ՀՈԴՎԱԾ V - ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ; ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ .....	18
Բաժին 5.01   Կասեցում .....	18
Բաժին 5.02   Բանկի կողմից չեղյալ հայտարարում.....	20
Բաժին 5.03   Փոխհատուցման անվերապահ պարտավորություններ, որոնց վրա չի ազդում կասեցման կամ չեղյալ հայտարարելու հանգամանքը .....	21
Բաժին 5.04   Պետության և Ստացողի պարտականությունները .....	21
Բաժին 5.05   Փոխհատուցման դեպքերը.....	22
ՀՈԴՎԱԾ VI - ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ .....	23
Բաժին 6.01   Կիրառելիություն .....	23
Բաժին 6.02   Իրավունքների չկիրառում .....	23
Բաժին 6.03   Վեճերի լուծում.....	23
ՀՈԴՎԱԾ VII - ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ; ԱՎԱՐՏԸ.....	24
Բաժին 7.01   Ուժի մեջ մտնելու ամսաթիվը .....	24

Բաժին 7.02	Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները.....	24
Բաժին 7.03	Իրավաբանական եզրակացություն .....	25
Բաժին 7.04	Ուժի մեջ չմտնելու պատճառով դադարեցում.....	25
Բաժին 7.05	Կատարման արդյունքում դադարեցում.....	25
<b>ՀՈԴՎԱԾ VIII - ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....</b>		<b>26</b>
Բաժին 8.01	Ծանուցումներ.....	26
Բաժին 8.02	Գործելու լիազորություն.....	27
Բաժին 8.03	Փոփոխություններ .....	27
Բաժին 8.04	Անգլերենը .....	27
Բաժին 8.05	Փոխհատուցում.....	27
Բաժին 8.06	Հանձնարարություններ .....	29
Բաժին 8.07	Իրավունքները, պաշտպանության միջոցները և հրաժարումները	29
Բաժին 8.08	Բացահայտում.....	29
Բաժին 8.09	Կրկնօրինակները .....	30
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ</b>		<b>1</b>
<b>ՆՄՈՒՇ 1 – ՄԱՍՀԱՄՆՄԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ.....</b>		<b>1</b>
<b>ՆՄՈՒՇ 2 – ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԻ ՁԵՎԸ.....</b>		<b>1</b>

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ թվագրված է 2019 թվականի նոյեմբերի 28-ին և ստորագրվել է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ որը ներկայացված է Ֆինանսների նախարարությամբ («Պետություն»), ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ (այսուհետ՝ «Ստացող») և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ («Բանկ») կամ «ՎԶԵԲ» միջև:

### ՆԱԽԱԲԱՆ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԱՅՆ, ՈՐ.

(A) ՎԶԵԲ-ը միջազգային ֆինանսական հաստատություն է, որը հիմնադրվել է միջազգային իրավունքի համաձայն ըստ 1990 թ. մայիսի 29-ով թվագրված՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման մասին համաձայնագրի («Բանկի հիմնադրման մասին համաձայնագիր»):

(B) Պետությունը և Ստացողը խնդրել են աջակցություն Ծրագրի մի մասը ֆինանսավորելու հարցում (ինչպես սահմանված է ստորև), որի նպատակն է աջակցել Պետությանը Գյումրի քաղաքի գլխավոր փողոցների վերակառուցման և փողոցային լուսավորության արդիականացման գործընթացում:

(C) Բանկը 2016 թ. մայիսի 11-ին վարկային պայմանագիր է կնքել Պետության՝ որպես վարկառուի, հետ, որի համաձայն Բանկը որպես վարկատու համաձայնել է մինչև 14.600.000 եվրո (տասնչորս միլիոն վեց հարյուր հազար եվրո) վարկ տրամադրել՝ Ծրագրի մի մասը ֆինանսավորելու նպատակով, ինչպես նկարագրված է դրա Հավելված 1-ում («Ծրագիր»), որը ենթակա է վարկային համաձայնագրով սահմանված ժամկետներին և պայմաններին, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել («Վարկային համաձայնագիր»):

(D) Պետությունը պետք է հասանելի դարձնի Վարկի միջոցները Ստացողին՝ դրամաշնորհի հետագա տրամադրման համաձայնության միջոցով՝ իրականացնելու Ծրագիրը 2016 թվականի դեկտեմբերի 30-ով թվագրված՝ Ծրագրի իրականացման համաձայնագրի ժամկետների և պայմանների համաձայն, որը կնքվել է Պետության և Ստացողի միջև («Ծրագրի իրականացման համաձայնագիր»):

(E) Բացի այդ, 2016թ. մայիսի 11-ին Բանկը կնքել է Ծրագրի համաձայնագիր Ստացողի հետ («Ծրագրի համաձայնագիր»), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել, համաձայն որի, հաշվի առնելով այն փաստը, որ Բանկը կնքել է Վարկային համաձայնագիրը և սույն Համաձայնագիրը, Ստացողը համաձայնել է իրականացնել Ծրագիրը՝ Ծրագրի համաձայնագրում նշված ժամկետների և պայմանների համաձայն:

(Բ) Բանկի հիմնադրման մասին համաձայնագրի 18-րդ հոդվածի համաձայն, Բանկը ստեղծել է ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամը («Հիմնադրամ»), որը կառավարվում և գործում է 2008թ. ապրիլի 15-ով թվագրված՝ ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի Կանոնների համաձայն, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել («Հիմնադրամի կանոնները»):

(Գ) Հիմնադրամի Կանոնների պայմանների հետ մեկտեղ, Բանկը համաձայնել է Հիմնադրամի միջոցներից դրամաշնորհ տրամադրել Պետությանը 2,650,000 (երկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար) եվրոն չգերազանցող գումարի չափով, սույն Համաձայնագրում սահմանված պայմաններով, որոշակի ապրանքների և աշխատանքների, ինչպես նաև Ծրագրի հետ կապված ծառայությունների գնման նպատակով:

Կողմերը **ՍՈՒՅՆՈՎ** համաձայնվում են հետևյալի մասին.

## **ՀՈԴՎԱԾ I – ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **Բաժին 1.01 Սահմանումներ**

Սույն Համաձայնագրում մեծատառերով գրված բառերը (ներառյալ Նախաբանը, Նմուշները և Հավելվածները), որոնք սույնով սահմանված չեն, սույն Համաձայնագրում օգտագործվելիս պետք է ունենան այն նույն իմաստները, որոնք տրված են նրանց Վարկային համաձայնագրում, Ծրագրի համաձայնագրում և/կամ Ստանդարտ պայմաններում (այդ թվում, երբ Ստանդարտ պայմաններում սահմանված տերմինները՝ փոփոխված Վարկային համաձայնագրում):

Սույն Համաձայնագրում (ներառյալ Նախաբանը, Նմուշները և Հավելվածները) օգտագործվելիս, եթե համատեքստը այլ բան չի թելադրում, հետևյալ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Բանկի հիմնադրման  
մասին համաձայնագիր» ունի Դեկլարատիվ դրույթ A-ում նրան տրված  
իմաստը:

«Պայմանագիր/  
Պայմանագրեր» նշանակում է այն պայմանագրերը, որոնք, Բանկի

համար բավարար ձևով և բովանդակությամբ, կնքվել են կամ կնքվելու են Ստացողի և Կապալառուների միջև՝ Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և հարակից ծառայությունների գնման, այդ թվում՝ Դրամաշնորհով ֆինանսավորվող բաղադրիչների ձեռքբերման կապակցությամբ, և որոնք ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվելու են Դրամաշնորհի միջոցներից:

«Կապալառու/ներ/»

նշանակում է լավ համբավ ունեցող կապալառուներ, որոնց Ստացողը կներգրավի Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և հարակից ծառայությունների, այդ թվում՝ Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների գնման նպատակով, ընդ որում յուրաքանչյուր կապալառու պետք է ընտրվի 3.06 Բաժնի պայմաններին համապատասխան (*Գնումներ*):

«Մասհանում»

նշանակում է Դրամաշնորհային ֆինանսավորման որևէ մասի՝ ժամանակ առ ժամանակ տրամադրումը, սույն Համաձայնագրի Բաժին 2.02-ի (*Մասհանումներ*) համաձայն:

«Ուժի մեջ  
մտնելու ամսաթիվը»

նշանակում է սույն Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու ամսաթիվը, սույն Համաձայնագրի Բաժին 7.01-ի համաձայն (*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը*):

«Հիմնադրամ»

ունի Դեկլարատիվ դրույթ F-ում նրան տրված իմաստը:

«Դրամաշնորհից  
ֆինանսավորվող  
բաղադրիչներ»

նշանակում է Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և հարակից ծառայությունները, որոնք ֆինանսավորվելու են Դրամաշնորհային միջոցներից, ինչպես նկարագրված է սույն Համաձայնագրի Առդիր 1-ում (*Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչներ*):

«Դրամաշնորհային

ֆինանսավորում» ունի այն իմաստը, որը տրվել է նրան սույն Համաձայնագրի Բաժին 2.01 (ա)-ում (*Գումարը, Արտարժույթը և Նպատակը*):

«Դրամաշնորհային ֆինանսավորման հասանելիության վերջնաժամկետը» նշանակում է սույն Համաձայնագրի Բաժին 2.02 (a)-ում նշված ամսաթիվը (*Դրամաշնորհային ֆինանսավորման հասանելիության վերջնաժամկետը*):

«Վարկային համաձայնագիր» ունի Դեկլարատիվ դրույթ C-ում իրեն տրված իմաստը:

«Վարկի միջոցները» նշանակում է այն ֆինանսավորումը, որը Բանկի կողմից տրամադրվել կամ տրամադրվելու է Վարկառու հանդիսացող Պետությանը, Վարկային համաձայնագրի ներքո:

«Գնումների պլան» ունի Ծրագրի համաձայնագրում իրեն տրված իմաստը:

«Ծրագիր» ունի Դեկլարատիվ դրույթ C-ում իրեն տրված իմաստը:

«Ծրագրի համաձայնագիր» ունի Դեկլարատիվ դրույթ E-ում իրեն տրված իմաստը:

«Ծրագրի ավարտի ամսաթիվը» նշանակում է այն ամսաթիվը, երբ կատարվել են հետևյալ բոլոր կետերը.

- (a) Ստացողը Բանկին և Ծրագրի իրականացման խորհրդատուին հանձնել է ծանուցում, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ՝ հավաստելով, որ Ծրագիրն ավարտվել է.
- (b) Բանկը վկայագիր է ստացել Ծրագրի իրականացման խորհրդատուից, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ, որը հաստատում է առանց որևէ նշանակալի վերապահումների, որ Ծրագիրը ավարտի է



հասցվել, և

- (c) Բանկը Ստացողին է հանձնել ծանուցում, հաստատելով, որ Բանկին բավարարում է այն փաստը, որ Ծրագիրը ավարտի է հասցվել:

«Ծրագրի իրականացման խորհրդատու»

նշանակում է Ծրագրի համաձայնագրի Բաժին 2.06 (a)-ի համաձայն Ծրագրի իրականացմանը աջակցելու նպատակով Ստացողի կողմից ներգրավված կամ առաջադրվող խորհրդատու(ներ):

«Ծրագրի ընդհանուր իրականացման համակարգող մարմնի լիազոր ներկայացուցիչ»

նշանակում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

«Ստացողի լիազորված ներկայացուցիչ»

նշանակում է Գյումրու քաղաքապետը:

«Փոխհատուցման պարտավորություն»

նշանակում է սույն Համաձայնագրի Բաժին 2.03-ում նշված հանձնառությունը (*Փոխհատուցման պայմանական և անվերապահ պարտավորություններ*), և դա կարող է լինել «Փոխհատուցման պայմանական պարտավորություն» կամ «փոխհատուցման անվերապահ պարտավորություն», ինչպես որ այդ տերմինները կօգտագործվեն այդ Բաժնում:

«Հիմնադրամի կանոնները»

տերմինն ունի Դեկլարատիվ դրույթ F-ում իրեն տրված իմաստը:

«Պետության լիազորված ներկայացուցիչ»

նշանակում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար:

«Ստանդարտ  
պայմաններ»

նշանակում է 2012 թվականի դեկտեմբերի 1-ով  
թվագրված՝ Բանկի ստանդարտ պայմանները:

## **Բաժին 1.02 Մեկնաբանություն**

Սույն Համաձայնագրում.

- (a) Այն բառերը, որոնք օգտագործվում են եզակի թվով, ներառում են նաև հոգնակի թիվը և հակառակը, եթե համատեքստը այլ բան չի պահանջվում,
- (b) Բովանդակությունը և վերնագրերը տեղադրված են միայն հղումների հարմարության համար և չպետք է ազդեն սույն Համաձայնագրի մեկնաբանության վրա,
- (c) այն բառերը, որոնք նշանակում են անձանց, ներառում են կորպորացիաներ, գործընկերություններ և այլ իրավաբանական անձանց, և անձին արվող հղումները ներառում են նրա իրավահաջորդներին և թույլատրված հանձնարարությունները, և
- (d) բացի այն դեպքերից, երբ սույն Համաձայնագրում այլ բան է նախատեսվում, հղումը կոնկրետ Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին կամ Նմուշին պետք է մեկնաբանվի որպես հղում Համաձայնագրի այդ կոնկրետ Հոդվածին կամ Բաժնին կամ Հավելվածին կամ Նմուշին:

## **ՀՈԴՎԱԾ II - ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

### **Բաժին 2.01 Գումարը, արժույթը և նպատակը**

- (a) Սույն Համաձայնագրին ենթակա և դրա համաձայն, Բանկը համաձայնվում է Հիմնադրամից տրամադրել Պետությանը 2,650,000 եվրո (երկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար եվրո) գումարի չափով դրամաշնորհ («Դրամաշնորհային ֆինանսավորում»):
- (b) Դրամաշնորհային ֆինանսավորումը պետք է օգտագործվի բացառապես սույն Համաձայնագրի Բաժին 3.06-ի (*Գնումներ*) համաձայն Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների ֆինանսավորման նպատակով:

(c) սույն Համաձայնագրի Բաժին 5.05-ի (*Փոխհատուցման դեպքեր*) համաձայն, Դրամաշնորհային ֆինանսավորումը վերադարձման ենթակա չէ:

(d) Բացահայտորեն ընդունված և համաձայնեցված է, որ Բանկը պարտավոր չէ որևէ Մասհանում կամ որևէ այլ վճարում անել սույն Համաձայնագրի համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի Մասհանմանը համարժեք կամ դրան վերաբերող գումարը հասանելի է Հիմնադրամում հենց այդ նպատակով:

(e) Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ է համաձայնում, Հիմնադրամից ֆինանսավորվող բաղադրիչները՝ պետք է համաֆինանսավորվեն Հիմնադրամի և Վարկի միջոցներից՝ ֆինանսավորման չափը և համամասնությունները կսահմանվեն Գնումների պլանում:

## **Բաժին 2.02 Մասհանումներ**

Սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ի (*Կասեցում*), Բաժին 5.02-ի (*Բանկի կողմից չեղյալ հայտարարում*) և Բաժին 7.02-ի (*Գործողության մեջ մտնելուն նախորդող պայմանները*) համաձայն, Դրամաշնորհային ֆինանսավորումը ժամանակ առ ժամանակ կտրամադրվի Բանկի կողմից՝ մեկ կամ ավելի Մասհանումներով՝ հետևյալ դրույթների համաձայն.

**(a) Դրամաշնորհային ֆինանսավորման հասանելիության վերջնաժամկետը.** Պետության՝ սույն Համաձայնագրի ներքո Մասհանման հայտ ներկայացնելու իրավունքը ուժի մեջ է մտնում Ուժի մեջ մտնելու օրվանից և դադարում է Վարկային համաձայնագրի Բաժին 2.02 (f) (2)-ում (*Վարկի այլ ֆինանսական պայմաններ*) նշված՝ (a) ֆինանսավորման հասանելիության վերջնաժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը համաձայնում է հետաձգել դադարեցման ամսաթիվը և գրավոր ծանուցում է Պետությանը այդ երկարաձգման մասին:

***(b) Ընդունելի ծախսեր***

Եթե Բանկն այլ կերպ չհամաձայնի, Մասհանումները հատկացվում են միայն հետևյալը ֆինանսավորելու համար.

(1) ծախսերը, որոնք արվել են (կամ, եթե Բանկը համաձայնի՝ որոնք պետք է արվեն) Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների հետ կապված ողջամիտ ծախսերի համար, և

(2) սույն Համաձայնագրի ամսաթվից հետո ծագած ծախսերը:

***(c) Մասհանումների հատկացման պայմանները***

Առանց սահմանափակելու սույն Բաժին 2.02-ի համընդհանրությունը, սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած Մասհանում, որը կապված է Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչներից մեկի կամ ավելիի հետ, ենթակա է հետևյալ պայմանի ամբողջությամբ կամ մասամբ, պայմաններին ենթակա կամ անվերապահորեն կատարմանը, կամ, Բանկի բացառիկ հայեցողությամբ՝ դրանից հրաժարմանը, որ, Պետության կողմից նման Մասհանմամ հատկացման հայտի ամսաթվի դրությամբ.

(1) Վարկային ֆինանսավորման Տրանշ Բ-ի գումարը, որն օգտագործվել է կամ պահանջվում է Պետության՝ որպես Վարկառուի, կողմից՝ գումարների օտագործման բավարար դիմումի հիման վրա, առնվազն հավասար է Դրամաշնորհային ֆինանսավորմանը, որը հատկացվել է կամ պահանջվել է Պետության կողմից՝ գումարների հատկացման բավարար հայտի հիման վրա, համաձայն Վարկային պայմանագրի, կամ

(2) Գնումների պլանի համաձայն նույն Դրամաշնորհից ֆինանսավորվող պարագաների համար հատկացված Վարկային ֆինանսավորման ամբողջ գումարն օգտագործվել է կամ պահանջվել է՝ օգտագործման բավարար դիմումի հիման վրա, Վարկային համաձայնագրի համաձայն:

***(d) Մասհանման հատկացման դիմում***

(1) Պետությունը կարող է դիմել Մասհանում ստանալու համար՝ Բանկին ներկայացնելով այդ Մասհանումը ստանալու դիմումի բնօրինակը, որը ստորագրված է Պետության լիազոր

ներկայացուցչի կողմից կամ Պետության լիազոր ներկայացուցչի նշանակված անձի կողմից: Յուրաքանչյուր Մասհանման հատկացման դիմում պետք է ներկայացվի Նմուշ 1-ում բերված ձևաչափով (*Մասհանման հատկացման դիմումի ձև*) և Բանկը պետք է ստանա այն նշված Մասհանման առաջարկվող ամսաթվից առնվազն տասնհինգ (15) աշխատանքային օր առաջ: Այդ դիմումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի, անդառնալի և պարտավորեցնող է Պետության և Ստացողի համար:

- (2) Մասհանման յուրաքանչյուր դիմում պետք է ուղեկցվի Բանկի համար բավարար ձևաչափ ու բովանդակություն ունեցող փաստաթղթերով և այլ ապացույցներով առ այն, որ Պետությունն իրավունք ունի ստանալ Մասհանման գումարը և որ Մասհանման գումարը կօգտագործվի բացառապես Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների համար: Այդ փաստաթղթերը ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանով. Կապալառուի հաշիվ-ապրանքագրերը՝ հավաստագրված Ստացողի կողմից կամ նրա անունից (եթե դա պահանջվում է համապատասխան պայմանագրով) հենց հաշիվ-ապրանքագրի վրա, կամ առանձին հավաստագրի ձևով, որտեղ Ստացողը հաստատում է, որ ապրանքները, աշխատանքները կամ ծառայությունները բավարար կերպով առաքվել կամ իրականացվել են, սույն Համաձայնագրի և համապատասխան պայմանագրի պահանջներին համաձայն:

**(e) Մասհանումների արժույթը**

Մասհանումները պետք է արվեն եվրոյով՝ Դրամաշնորհային ֆինանսավորման աղբյուրներից ֆինանսավորվող ծախսերի գումարին հավասար կամ համարժեք: Եթե ծախսերն արվել են ոչ թե եվրոյով, բայց այլ արժույթով, ապա համարժեք Մասհանման գումարը որոշվում է հետևյալ կերպ.

- (1) Եթե Պետությունը խնդրում է, որ Մասհանումը լինի եվրոյով, ապա Մասհանման գումարը որոշվում է Բանկի կողմից, փոխանակման արժեքի հիման վրա, որը Բանկը կվճարեր, եթե գներ այդ արժույթը կամ արժույթները՝ խնդրանքը բավարարելու նպատակով:
- (2) Եթե Պետությունը խնդրում է տրամադրել Մասհանումը ծախսերի արժույթով կամ արժույթներով, ապա Բանկը, եթե այդպիսի ծախսերը հասանելի արժույթներով կամ արժույթով են, կգնի այդ

արժույթը կամ արժույթները Բանկի համար ընդունելի եղանակով: Մասհանման գումարի համարժեքը որոշվում է Բանկի կողմից՝ արժույթի փոխանակման ծախսերի հիման վրա, որոնք Բանկն արել է կամ կաներ, եթե օգտագործեր եվրո՝ բավարարելու Մասհանում տրամադրելու խնդրանքը:

***(f) Այլ արժույթներով վճարումներ***

Բացառիկ հանգամանքներում Բանկը կարող է բավարարել Պետության խնդրանքը, որ վճարումը կատարվի ոչ թե եվրոյով կամ ծախսերի արժույթով, բայց այլ արժույթով կամ արժույթներով: Այդ դեպքում Բանկը կզնի նման արժույթ կամ արժույթներ Բանկի համար ընդունելի եղանակով: Մասհանման գումարի համարժեքը որոշվում է Բանկի կողմից՝ արժույթի փոխանակման ծախսերի հիման վրա, որոնք Բանկն արել է կամ կաներ, եթե օգտագործեր եվրո՝ բավարարելու Մասհանում տրամադրելու խնդրանքը:

***(g) Մասհանման նվազագույն գումարը***

Բացառությամբ Մասհանման վերջին գումարի, կամ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը այլ կերպ կհամաձայնի, Մասհանման վճարումները պետք է արվեն ոչ պակաս, քան 50,000 եվրո (հիսուն հազար եվրո) գումարի չափով:

**Բաժին 2.03 Փոխատուցման պայմանական և անվերապահ պարտավորությունները**

(a) Պետության խնդրանքով, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ, Բանկը կարող է, համաձայն ՎՋԵԲ-ի՝ Մասհանումների տրամադրման ձեռնարկի կիրառելի դրույթների, *mutatis mutandis*՝ իրենց բոլոր փոփոխություններով, սահմանի փոխհատուցման անվերապահ կամ պայմանական պարտավորություն՝ փոխհատուցելու այն վճարումները, որոնք արվել են բանկերի կողմից ակրեդիտիվի նամակների ներքո այն ծախսերի կապակցությամբ, որոնք պետք է ֆինանսավորվեն Դամաշնորհային ֆինանսավորման միջոցով: Ցանկացած նման փոխհատուցում իրենից ներկայացնում է Մասհանում:

(b) Փոխհատուցման պայմանական պարտավորության դեպքում, Բանկի կողմից վճարման պարտավորությունը կասեցվում կամ դադարեցվում է Բանկի կողմից Դամաշնորհային ֆինանսավորման կասեցումից կամ չեղյալ հայտարարելուց անմիջապես հետո, ըստ սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ի (*Կասեցում*) կամ Բաժին 5.02-ի (*Բանկի կողմից չեղյալ հայտարարում*):

(c) Փոխհատուցման անվերապահ պարտավորության դեպքում, Բանկի կողմից վճարման պարտավորությունը չպետք է ենթարկվի Դրամաշնորհային ֆինանսավորման որևէ հետագա կասեցման կամ չեղյալ հայտարարման ազդեցությանը:

#### **Բաժին 2.04 Պետության կողմից չեղյալ հայտարարում**

Պետությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել Դրամաշնորհային ֆինանսավորման չտրամադրված մասը ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ոչ ուշ, քան երեսուն (30) Աշխատանքային օր առաջ Բանկին ուղարկելով գրավոր ծանուցում: Պետության կողմից չեղյալ հայտարարման մասին ցանկացած ծանուցում անդառնալի է և պարտավորեցնող՝ Պետության և Ստացողի համար:

#### **Բաժին 2.05 Վճարումներ**

(a) Եթե Բանկն այլ կերպ չհամաձայնի, Բանկի կողմից սույն Համաձայնագրով Մասհանման համար տրամադրվող գումարները պետք է ուղղակիորեն վճարվեն համապատասխան Կապալառուի հաշվեհամարին, ինչպես որ Պետությունը կնշի Մասհանման տրամադրման դիմումի մեջ:

(b) Եթե սույն Համաձայնագրով նախատեսված որևէ վճարման ժամկետն ընկնի այնպիսի օրվա վրա, որը Ոչ աշխատանքային օր է, ապա այդ վճարումը պետք է փոխարենը արվի հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

(c) Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Բանկին վճարվելիք ցանկացած գումար պետք է վճարվի առանց հաշվանցման կամ եվրոյով հակընդդեմ հայցի, վճարման ամսաթվի դրությամբ արժեքով այն հաշվեհամարին Լոնդոնում, Անգլիա, կամ այլ վայրում, որը Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ նշանակել՝ ծանուցելով Պետությանը:

### **ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

#### **Բաժին 3.01 Համագործակցություն և տեղեկատվություն**

(a) Ստանդարտ պայմանների Բաժին 4.01-ի (*Համագործակցություն և տեղեկատվություն*) դրույթները կիրառվում են նույնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ, *mutatis mutandis*՝ իրենց բոլոր փոփոխություններով, այդ թվում, առանց սահմանափակելու նրանց ամբողջականությունը:

- (i) «Վարկառուին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «Ստացողին» կամ «Պետությանը» (եթե կիրառելի է) արվող հղումներ,
- (ii) «Վարկին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «Դրամաշնորհային ֆինանսավորման» արվող հղումներ, և
- (iii) «Վարկային պայմանագրին» և «Ծրագրի համաձայնագրին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես հղումներ «սույն Համաձայնագրին»:

(b) Վարկային համաձայնագրի և/կամ Ծրագրի համաձայնագրի համաձայն տեղեկատվություն ստանալիս, Բանկը կարող է օգտագործել և ապավինել ցանկացած նման տեղեկատվությանը իր դերում՝ որպես սույն Համաձայնագրի ներքո Դրամաշնորհային ֆինանսավորում տրամադրող:

### **Բաժին 3.02 Ծրագրի իրականացման հետ կապված պարտականությունները**

- (a) Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը այլ կերպ է համաձայնում, Ստացողը պետք է (և Պետությունը պետք է երաշխավորի, որ Ստացողը)
  - (1) իրականացնի Ծրագիրը պատշաճ կերպով և արդյունավետությամբ և Ծրագրի համաձայնագրին և սույն Համաձայնագրին համապատասխան,
  - (2) իրականացնի Ծրագիրը Գնումների պլանի համաձայն, որը ենթակա է ցանկացած փոփոխության, որին Բանկը կարող է գրավոր համաձայնություն տալ,
  - (3) իրականացնի Ծրագիրը բնապահպանական և սոցիալական Գործողությունների պլանի և կատարողականի՝ սահմանված պահանջների համաձայն, և
  - (4) ձեռնարկի բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի հաջող ավարտը ապահովելու համար:
- (b) Ստանդարտ պայմանների Բաժին 4.02-ի (*Ծրագրի իրականացման հետ կապված պարտավորությունները*) դրույթները կիրառվում են նույնպես, ինչպես եթե նրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ, mutatis



mutandis՝ իրենց բոլոր փոփոխություններով, այդ թվում, առանց սահմանափակելու նրանց ամբողջականությունը.

(i) «Վարկառուին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «Ստացողին» կամ «Պետությանը» (եթե կիրառելի է) արվող հղումներ,

(ii) «Վարկի միջոցներին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես հղումներ «Դրամաշնորհային ֆինանսավորմանը»:

(c) Ընդունվում է, որ Ստացողը Ծրագիրը կիրականացնի Ծրագրի ընդհանուր համակարգման մարմնի լիազոր ներկայացուցչի համակարգման ներքո:

### **Բաժին 3.03 Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանություն**

Եթե Բանկն այլ կերպ չհամաձայնի, Ստացողը պետք է երաշխավորի, որ Ծրագրի այն մասը, որը ստանում է Դրադրամաշնորհային ֆինանսավորում, կիրականացվի Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.05-ի համաձայն (*Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության հողվածներ*):

### **Բաժին 3.04 Պետության՝ աջակցություն ցուցաբերելու պարտականությունները**

(a) Պետությունը չպետք է ձեռնարկի որևէ գործողություն, և ոչ էլ թույլ տա իր գործակալներից կամ դուստր ձեռնարկություններից որևէ մեկին ձեռնարկել որևէ գործողություն, որը կարող է կանխել կամ խոչընդոտել Ծրագրի իրականացմանը կամ Ծրագրի օբյեկտների արդյունավետ գործունեությանը կամ Ստացողի ստանձնած պարտավորությունների կատարմանը սույն Համաձայնագրի ներքո: Պետությունը պետք է երաշխավորի, որ ոչ մի նման գործողություն չի ձեռնարկվի կամ չի թույլատրվի իր քաղաքական կամ վարչական ստորաբաժանումներից որևէ մեկին, կամ Պետությանը կամ նման ստորաբաժանումներին պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող, կամ նրանց հաշվին կամ ի շահ գործող սուբյեկտներին:

(b) Եթե Բանկն այլ կերպ չհամաձայնի, Պետությունը պետք է.

(1) պատշաճ կերպով կատարի սույն Համաձայնագրի և Վարկային Համաձայնագրի ներքո իր բոլոր պարտավորությունները,

(2) սատարի Ստացողին՝ սույն Համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում, այդ թվում՝ ձեռնարկելով անհրաժեշտ և ցանկալի բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ գործողությունները և Ստացողին հատկացնելով և տրամադրելով կամ նպաստելով, որ նրան տրամադրվեն միջոցներ ու աջակցություն, ինչպես և երբ անհրաժեշտ լինի, որպեսզի Ստացողը Ծրագիրը ավարտին հասցնի, և

(3) կազմի ցանկացած այլ փաստաթղթեր և ձեռնարկի ցանկացած այլ գործողություն, որը Բանկը կհամարի անհրաժեշտ կամ ցանկալի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար:

### **Բաժին 3.05 Ծրագրի իրականացման թիվ**

Ստացողը պետք է ապահովի, որ Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.03-ում (*Ծրագրի իրականացման թիվ*) նշված՝ Ծրագրի իրականացման թիվի գործունեությունն ու պարտականությունները ներառեն Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների գնումները և դրամաշնորհային ֆինանսավորման իրականացումը:

### **Բաժին 3.06 Գնումներ**

(a) Եթե Բանկն այլ կերպ չհամաձայնի, Դրամաշնորհից ֆինանսավորվող բոլոր պարագաների գնումները պետք է իրականացվեն ՎԶԵԲ-ի գնումների կանոններով: Դրամաշնորհից ֆինանսավորվող պարագաները պետք է ձեռք բերվեն բաց մրցույթով և /կամ պարզեցված բաց մրցույթի միջոցով, ինչպես սահմանված է ՎԶԵԲ-ի Գնումների կանոնակարգի III բաժնի 3.8-րդ կետում:

(b) Բոլոր պայմանագրերը ենթակա են ՎԶԵԲ-ի Գնումների կանոնակարգում սահմանված՝ նախնական քննության ընթացակարգերին:

### **Բաժին 3.07 Ծրագրի փաստաթղթերն ու հաշվետվությունները; ստուգումներ**

(a) Ստացողը պետք է ապահովի, որ Բանկին իր կողմից տրամադրված տեղեկությունները և Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.08-ից (*Հաշվետվությունների հաճախականությունը և ներկայացման պահանջները*), ինչպես նաև Ստանդարտ Պայմանների Բաժին 4.04-ից (*Ծրագրի փաստաթղթերը և հաշվետվությունները*) և Բաժին 5.02-ից

(Հաշվետվություն) բխող՝ Ստացողի պարտականություններին համաձայն, վարվող փաստաթղթերը

(1) ներառեն մանրամասն տեղեկություններ, որոնք վերաբերում են Պայմանագրերին, Կապալառուներին, Մասհանումներին, Դրամաշնորհային ֆինանսավորմանը և դրա օգտագործմանը, ինչպես նաև նկարագրեն համապատասխանության կարգավիճակը սույն Համաձայնագրի յուրաքանչյուր Հոդվածին, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ,

(2) պարունակեն բավարար տեղեկություններ՝ հնարավորություն տալու հետևել Դրամաշնորհային ֆինանսավորմանը Վարկային ֆինանսավորումից առանձին, և

(3) ներառեն այնպիսի այլ տեղեկություններ, որոնք, *inter alia* վերաբերում են Ստացողին, Ծրագրին և սույն Համաձայնագրում նկարագրված գործարքներին, ինչպես Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

(b) Հասանելի դառնալու պահին, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ քան երեսուն (30) օրվա ընթացքում վերջին Պայմանագրի ավարտից հետո, Ստացողը պետք է Բանկին տրամադրի (եթե Բանկը պահանջի՝ Ստացողի լիազորված ներկայացուցչի կողմից վավերացված) ավարտական հաշվետվություն Դրամաշնորհային ֆինանսավորման օգտագործման վերաբերյալ, որը մանրամասն կթվարկի բոլոր Պայմանագրերը, բոլոր Կապալառուներին, Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչները, առաքման և կառուցման ժամանակացույցները, և սկզբնական կանխատեսումների հետ համեմատությունը:

(c) Հասանելի դառնալու պահին, սակայն բոլոր դեպքերում Ծրագրի ավարտի ամսաթվից հետո երեսուն (30) օրվա ընթացքում, Ստացողը պետք է Բանկին տրամադրի (եթե Բանկը պահանջի՝ Ստացողի լիազորված ներկայացուցչի կողմից վավերացված) ավարտական հաշվետվություն Ծրագրի վերաբերյալ՝ նշելով, թե ինչպես է օգտագործվել Դրամաշնորհային ֆինանսավորումը:

(d) Ստացողը Բանկին և նրա ներկայացուցիչներին պետք է հնարավորություն ընձեռի, Բանկի պահանջով.

(1) այցելելու Ծրագրի հետ կապված ցանկացած օբյեկտ և շինհրապարակ,

(2) ստուգելու բոլոր և ցանկացած ապրանք, աշխատանք և ծառայություն, որը ֆինանսավորվել է Դրամաշնորհային ֆինանսավորումից և սույն Համաձայնագրով Ստացողի ստանձնած

պարտավորությունների կատարմանն առնչվող բոլոր գործարանները, արտադրամասերը, կայքերը, աշխատանքները, շենքերը, գույքը, սարքավորումները, գրառումները և փաստաթղթերը, և

(3) այդ նպատակներով՝ հանդիպելու և քննարկումներ անցկացնելու Ստացողի այն ներկայացուցիչների և աշխատողների հետ, որոնց հետ հանդիպելը Բանկը կհամարի անհրաժեշտ և տեղին:

(e) Պայմանագիրը շնորհելուն պես, Բանկը կարող է հրապարակել դրա նկարագրությունը, Կապալառուի անունը և քաղաքացիությունը և պայմանագրի գինը:

(f) Ստացողը պետք է ապահովի, որ Բանկի ու նրա ներկայացուցիչների համար հասանելի լինեն Ստացողի՝ հաշվապահական և հաշվետվությունների մատյանները, որոնք կապված են Ծրագրի և Դրամաշնորհային ֆինանսավորման հետ:

#### **ՀՈԴՎԱԾ IV - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԹՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ**

##### **Բաժին 4.01 Ֆինանսական փաստաթղթեր և հաշվետվություններ**

(a) Ստացողը Բանկի համար ընդունելի և հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան պետք է վարի առանձին գրառումներ և հաշիվներ՝ կապված Դրամաշնորհային ֆինանսավորման հետ:

(b) Ստացողը պետք է ապահովի, որ, համաձայն Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.08-ի (*Հաշվետվությունների հաճախականությունը և ներկայացման նկատմամբ պահանջները*), ինչպես նաև Ստանդարտ պայմանների Բաժին 5.02 (c)(i)-ի (*Հաշվետվություններ*), Ստացողի կողմից Բանկին տրամադրված տեղեկությունները և Ստացողի կողմից վարվող փաստաթղթերը

(1) ներառեն Դրամաշնորհային ֆինանսավորման և դրա օգտագործման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ,

(2) ներառեն բավականաչափ տեղեկություններ՝ հնարավորություն ընձեռելով հետևելու դրամաշնորհային ֆինանսավորմանը՝ Վարկային ֆինանսավորումից առանձին, և

(3) ներառեն այնպիսի այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվառմանը, հաշիվներին և ֆինանսական քաղվածքներին, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամիտ սահմաններում պահանջել:

(c) Ստացողը պետք է, մինչև Ծրագրի ավարտի ամսաթվից առնվազն հինգ (5) տարի անց.

(1) Պահպանի ֆինանսական հաշվապահական փաստթղթերը և հաշվառումները, որոնք վերաբերում են Դրամաշնորհային միջոցներից ֆինանսավորվող միջոցառումներին, և

(2) Տրամադրի Բանկին, ըստ պահանջի, բոլոր համապատասխան ֆինանսական տեղեկությունները, այդ թվում՝ հաշիվների քաղվածքները, որոնք կապված են Ծրագրի հետ:

#### **Բաժին 4.02 Բիզնեսի և գործառնությունների վարման կարգը**

Ստացողը պետք է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի.

(a) պատշաճ կերպով կատարի սույն Համաձայնագրով և Ծրագրի Համաձայնագրով ստանձնած՝ իր բոլոր պարտավորությունները, և

(b) կազմի փաստաթղթեր և ձեռնարկի ցանկացած այլ գործողություն, որը Բանկը կհամարի անհրաժեշտ կամ ցանկալի՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար:

#### **Բաժին 4.03 Հարկեր**

(a) Ստացողը պարտավոր է ժամանակին վճարել սույն Համաձայնագրի կատարման, թողարկման, առաքման, գրանցման կամ նոտարականացման (այդ թվում՝ Դրամաշնորհային ֆինանսավորման տրամադրման դրույթները) կամ դրա հետ կապված ցանկացած այլ փաստաթղթի վրա սահմանված և դրանց կապակցությամբ վճարման ենթակա բոլոր Հարկերը:

(b) Դրամաշնորհի ֆինանսավորման միջոցներից ոչ մի մասը չպետք է օգտագործվի, անմիջականորեն կամ անուղղակիորեն, ցանկացած Հարկի վճարման համար, լինեն դրանք ուղղակի թե անուղղակի, Պետության տարածքում թե այլուր:

#### **Բաժին 4.04 Տեսանելիություն**

Ստացողը համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկի համապատասխան հրապարակումներում, հաղորդումներում, ինչպես նաև ԶԼՄ-ներում հրապարակելու այն փաստը, որ Ծրագիրը ստացել է ֆինանսավորում, *inter alia*, Հիմնադրամի կողմից:

#### **Բաժին 4.05 Խարդախություն և կոռուպցիա**

Ստացողը չպետք է ներգրավվի, և չպետք է լիազորի կամ թույլ տա իր պաշտոնյաներին, տնօրեններին, լիազորված աշխատակիցներին, գործակալներին կամ ներկայացուցիչներին ներգրավվել որևէ արգելված գործելակերպին՝ սույն Ծրագրի, Դրամաշնորհային ֆինանսավորման կամ սույն Համաձայնագրով նախատեսված որևէ գործարքի առնչությամբ:

### **ՀՈԴՎԱԾ V - ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ; ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ**

#### **Բաժին 5.01 Կասեցում**

(a) Եթե տեղի է ունեցել և շարունակվում է ստորև նշված դեպքերից որևէ մեկը, ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, ամբողջությամբ կամ մասամբ կասեցնել Պետության՝ սույն Համաձայնագրի ներքո հետագա Մասհանումներ ստանալու իրավունքը՝

(1) Վարկային Համաձայնագիրը կամ Ծրագրի համաձայնագիրը կամ Ծրագրի իրականացման համաձայնագիրը դադարել են ուժի մեջ լինել և գործել կամ դադարեցվել են,

(2) Ստացողը չի կատարել կամ չի կատարում սույն Համաձայնագրի, Ծրագրի Համաձայնագրի կամ Ծրագրի իրականացման համաձայնագրի ներքո՝ իր պարտավորություններից որևէ մեկը,

(3) Պետությունը չի կատարել կամ չի կատարում սույն Համաձայնագրի, Վարկային Համաձայնագրի կամ Ծրագրի իրականացման համաձայնագրի ներքո՝ իր պարտավորություններից որևէ մեկը,

(4) ապացուցվել է, որ այլընտրանքային ֆինանսավորում է ձեռք բերվել Ծրագրի ֆինանսավորման համար՝ առաջացնելով կրկնակի ֆինանսավորում (ամբողջությամբ կամ մասամբ),

(5) Բանկը կասեցրել է, կամ տեղի է ունեցել իրադարձություն, որը Բանկին իրավունք է տալիս ամբողջությամբ կամ մասամբ կասեցնել

Պետության՝ որպես Վարկատուի իրավունքը՝ Վարկային համաձայնագրի շրջանակներում դիմելու գումարների Օգտագործման համար, համաձայն Ստանդարտ պայմանների Բաժին 7.01-ի (*Կասեցում*) և Վարկային համաձայնագրի Բաժին 4.01-ի (*Կասեցում*):

(6) Բանկը չեղյալ է հայտարարել, կամ տեղի է ունեցել իրադարձություն, որը Բանկին իրավունք է տալիս ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել Վարկային ֆինանսավորումը Ստանդարտ պայմանների Բաժին 7.02-ի համաձայն (*Բանկի կողմից չեղյալ հայտարարում*),

(7) տեղի է ունեցել կամ շարունակվում է որևէ դեպք, որը սահմանված է Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ում (*Արագացման դեպքեր*) կամ Վարկային համաձայնագրի Բաժին 4.02-ում (*Մարման ժամկետի արագացում*), և Բանկը հայտարարել է, որ Վարկային ֆինանսավորման բոլոր մասերը կամ դրա որևէ մասը ենթակա են/է պարտադիր վճարման ըստ Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ի (*Արագացման դեպքեր*),

(8) որևէ իրադարձությունների արդյունքում բացառիկ իրավիճակ է առաջացել, ինչը անհավանական է դարձնում Ծրագրի իրականացումը կամ Ստացողի կամ Պետության կողմից սույն Համաձայնագրի կամ Ծրագրի Համաձայնագրի ներքո իրենց պարտականությունների կատարումը,

(9) Ստացողի կամ Պետության կողմից սույն Համաձայնագրի կամ Ծրագրի Համաձայնագրի վերաբերյալ ներկայացված տեղեկությունները որևէ նյութական առումով սխալ են կամ ապակողմնորոշող,

(10) Վարկային համաձայնագրի ներքո Պետությունը՝ որպես Վարկատու, ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ է հայտարարել Վարկային ֆինանսավորման որևէ չհատկացված մասհանում, Ստանդարտ Պայմանների Բաժին 3.08-ի (*Չեղյալ հայտարարում*) համաձայն,

(11) Հիմնադրամը դադարեցվել է Հիմնադրամի կանոնների համաձայն,

(12) դատական գործընթացի արդյունքում պարզվել է, որ Պետությունը, Ստացողը, որևէ Կապալառու կամ նրանց պաշտոնյաներից, աշխատակիցներից, գործակալներից կամ ներկայացուցիչներից որևէ մեկը ներգրավված է եղել որևէ Արգելված գործելակերպին, կամ

(13) Ծրագրի նկատմամբ Պետության տարածքում կիրառվող օրենսդրական և կարգավորող շրջանակում փոփոխություններ են կատարվել, այն կասեցվել է, ուժը կորցրած ճանաչվել կամ հրաժարվել այնպես, որ զգալի բացասական ազդեցություն է ունեցել Ստացողի գործունեության կամ ֆինանսական վիճակի և նրա՝ սույն

Համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկը կատարելու կարողության վրա:

- (b) Պետության՝ ցանկացած հետագա Մասհանում ստանալու իրավունքը շարունակում է կասեցված լինել ամբողջությամբ կամ մասամբ՝ կախված դեպքից, մինչև այն պահը, երբ կասեցման պատճառ դարձած դեպքը կամ իրադարձությունները չդադարեն գոյություն ունենալուց, բացի այն դեպքերից, երբ Բանկը ծանուցել է Պետությանը և Ստացողին, որ վերականգնվել է հետագա Մասհանումներ ստանալու իրավունքը, սակայն այն պայմանով, որ հետագա Մասհանումներ ստանալու իրավունքը վերականգնվել է միայն այդ ծանուցման մեջ նշված պայմանների չափով և դրանց ենթակա, և ոչ մի նման ծանուցում չպետք է ազդի կամ խախտի Բանկի որևէ իրավունք, լիազորություն կամ ուղղիչ միջոց՝ սույն Բաժնում նկարագրված որևէ հետագա դեպքի առնչությամբ:

#### **Բաժին 5.02 Բանկի կողմից չեղյալ հայտարարում**

- (a) Եթե ցանկացած ժամանակ Բանկը, Պետության և Ստացողի հետ խորհրդակցելուց հետո, որոշի, որ Դրամաշնորհային ֆինանսավորման որևէ գումար չի պահանջվի Ծրագրի ծախսերը Դրամաշնորհային միջոցներից ֆինանսավորելու համար, ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, դադարեցնել Դրամաշնորհային ֆինանսավորման այդ մասը: Դրամաշնորհային ֆինանսավորման հասանելիության վերջին ամսաթվին, Դրամաշնորհային ֆինանսավորման յուրաքանչյուր չհատկացված մասհանում ինքնաբերաբար չեղյալ կհայտարարվի, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի:

- (b) Եթե Պետության՝ սույն Համաձայնագրի ներքո Դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակում Մասհանման որևէ մասնաբաժին ստանալու իրավունքը, կասեցվի սույն Համաձայնագրի Բաժին 5.01-ի (*Կասեցում*) համաձայն երեսուն (30) օր շարունակվող ժամանակահատվածով, ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել Դրամաշնորհային ֆինանսավորումը:

- (c) Եթե Բանկը չեղյալ է հայտարարել, կամ տեղի է ունեցել իրադարձություն, որը Բանկին իրավունք է տալիս ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել Վարկային ֆինանսավորումը համաձայն Ստանդարտ Պայմանների Բաժին 7.02-ի (*Բանկի կողմից չեղյալ հայտարարում*), ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ հայտարարել Դրամաշնորհային ֆինանսավորումը:

- (d) Եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշի, որ



(1) Դրամաշնորհային միջոցներից ֆինանսավորվող պարագաներից որևէ մեկի գնումները հակասում են սույն Համաձայնագրին,

(2) սույն Համաձայնագրով հատկացված միջոցներն օգտագործվել են այլ նպատակներով, և ոչ թե սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով,

(3) ցանկացած Պայմանագրի առնչությամբ, Պետության, Ստացողի կամ որևէ Կապալառուի ցանկացած ներկայացուցիչ ներգրավվել է որևէ Արգելված գործելակերպին նման Պայմանագրի գնումների կամ կատարման ընթացքում, և Պետությունն ու Ստացողը ժամանակին համապատասխան գործողություններ չեն ձեռնարկել Բանկին բավարարող եղանակով՝ իրավիճակը շտկելու ուղղությամբ,

ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, չեղյալ հայտարարել Դրամաշնորհային ֆինանսավորումը ամբողջությամբ կամ մասամբ: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի ծանուցումը տալուն պես:

(e) Եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշի, որ դատական վարույթի կամ այլ պաշտոնական հարցման արդյունքում հայտնաբերվել է Պետության, Ստացողի կամ որևէ Կապալառուի ներկայացուցչի ներգրավվածությունը ցանկացած Արգելված գործելակերպին, ապա Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը և Ստացողին, չեղյալ հայտարարել Դրամաշնորհային ֆինանսավորումը ամբողջությամբ կամ մասամբ: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում ծանուցումը տալուն պես:

**Բաժին 5.03 Փոխհատուցման անվերապահ պարտավորություններ, որոնց վրա չի ազդում կասեցման կամ չեղյալ հայտարարելու հանգամանքը**

Ոչ մի չեղյալ հայտարարում կամ կասեցում չի կիրառվում այն գումարների նկատմամբ, որոնք ենթակա են Փոխհատուցման անվերապահ պարտավորությունների, որոնք ստանձնել է Բանկը սույն Համաձայնագրի Բաժին 2.03-ի (*Փոխհատուցման պայմանական և անվերապահ պարտավորություններ*) համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պարտավորության մեջ հստակ այլ բան է նախատեսված:

**Բաժին 5.04 Պետության և Ստացողի պարտականությունները**

Չնայած որևէ չեղյալ հայտարարմանը կամ կասեցմանը, սույն Համաձայնագրի բոլոր դրույթները շարունակվում են ամբողջությամբ ուժի և գործողության մեջ լինել, բացի այն դեպքերից, երբ սույնով հստակ այլ բան է նախատեսված:

#### **Բաժին 5.05 Փոխհատուցման դեպքերը**

Եթե հետևյալ դեպքերից որևէ մեկը տեղի է ունեցել, և, եթե կիրառելի է այս դեպքում, շարունակվում է ստորև նշված ժամանակահատվածի ընթացքում, ապա այդ իրադարձության շարունակման ընթացքում ցանկացած պահի Բանկը կարող է՝ ծանուցելով Պետությանը, պահանջել, որ Պետությունը և Ստացողը վերադարձնեն Դրամաշնորհային ֆինանսավորումը ամբողջությամբ կամ դրա որևէ մասը (և վճարեն սույն Համաձայնագրով վճարման ենթակա ցանկացած այլ գումարներ), և այդ գումարները այդուհետ անմիջապես վճարման ենթակա են դառնում (չնայած սույն Համաձայնագրում դրան հակասող որևէ բանի)։

(a) Տեղի է ունեցել սույն Համաձայնագրի Բաժին 5.01(a)(1)-ում (*Կասեցում*) նկարագրված դեպքերից որևէ մեկը:

(b) Տեղի է ունեցել սույն Համաձայնագրի Բաժին 5.01 (a)(2)-ում (*Կասեցում*) նշված դեպքերից որևէ մեկը, և, եթե հնարավոր էր այն շտկել՝ շարունակվել է Բանկի կողմից այդ մասին ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում:

(c) Տեղի է ունեցել կամ շարունակվում է Ստանդարտ պայմանների և Վարկային համաձայնագրի մեջ նշված՝ Արագացման ցանկացած դեպք և Բանկը հայտարարել է, որ Վարկավորման ֆինանսավորման բոլոր մասերը կամ որևէ մի մաս ենթակա է վճարման Ստանդարտ պայմանների Բաժին 7.06-ի (*Արագացման դեպքեր*) համաձայն:

(d) Բանկը ցանկացած պահի տեղեկանում է, որ դատական գործընթացի կամ այլ պաշտոնական հետաքննության արդյունքում պարզվել է, որ Պետությունը, Ստացողը կամ Կապալառուի ցանկացած ներկայացուցիչ ներգրավված է որևէ Արգելված գործելակերպին:

(e) Պետությունը՝ որպես Վարկային համաձայնագրի ներքո Վարկառու, չեղյալ է հայտարարել, ամբողջությամբ կամ մասամբ, Վարկային ֆինանսավորման որևէ չտրամադրված մասհանում, համաձայն Ստանդարտ Պայմանների Բաժին 3.08-ի (*Չեղյալ հայտարարում*):

## ՀՈՂՎԱԾ VI - ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

### Բաժին 6.01 Կիրառելիություն

Պետության և Ստացողի իրավունքներն ու պարտականությունները վավեր են և կիրառելի իրենց պայմանների համաձայն, անկախ նրանից, թե դրան հակասող տեղական օրենք կա: Պետությունը և Ստացողը որևէ իրավիճակում իրավունք չունեն որևէ պահանջ ներկայացնել առ այն, որ սույն Համաձայնագրի որևէ դրույթ անվավեր է կամ որևէ պատճառով չի կարող կիրառելի լինել:

### Բաժին 6.02 Իրավունքների չկիրառում

Սույն Համաձայնագրով որևէ Կողմին վերապահված որևէ իրավունքի, լիազորության կամ ուղղիչ միջոցի իրականացման հետաձգումը կամ ձախողումը որևէ խախտման հետևանքով չպետք է խախտի այդ իրավունքը, լիազորությունը կամ պաշտպանության միջոցը, կամ մեկնաբանվի որպես դրանցից հրաժարում կամ համաձայնություն պարտականությունների չկատարմանը, ինչպես նաև նման Կողմի գործողությունները՝ կապված պարտականությունների ցանկացած չկատարման հետ, կամ նրա համաձայնությունը այդ չկատարմանը, չպետք է ազդի կամ վնաս հասցնի այդ Կողմի՝ պարտականությունների որևէ հետագա չկատարման հետ կապված որևէ իրավունքին, լիազորությանը կամ պաշտպանության միջոցին:

### Բաժին 6.03 Վեճերի լուծում

Ստանդարտ պայմանների Բաժին 8.04-ի (*Վեճերի լուծում*) դրույթները կիրառվում են, ինչպես էթե նրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ, *mutatis mutandis*՝ իրենց բոլոր անհրաժեշտ փոփոխություններով, բացառությամբ հետևյալ կետերի.

- (i) Ստանդարտ պայմանների Բաժին 8.04 (b)(iii)-ը, սույն Համաձայնագրի նպատակների համար, պետք է փոփոխվի հետևյալ կերպ. «(iii) Եթե Արբիտրաժային մշտական դատարանի Գլխավոր քարտուղարը նշանակում է արբիտր, ապա Արբիտրաժային Մշտական դատարանի Գլխավոր քարտուղարը պետք է ազատ լինի ընտրելու ցանկացած անձի, ով, նրա կարծիքով, կարող է արբիտր հանդիսանալ՝ UNCITRAL արբիտրաժային կանոնների 9.2-րդ և/կամ 9.3-րդ հոդվածներին համապատասխան»,
- (ii) «Օրագրի համաձայնագրին» հղումները պետք է ընթերցվեն որպես հղումներ «սույն Համաձայնագրին», և

- (iii) «Վարկառուին» արվող հղումները պետք է ընթերցվեն որպես «Ստացողին» արվող հղումներ:

## ՀՈՂՎԱԾ VII - ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ; ԱՎԱՐՏԸ

### Բաժին 7.01 Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Եթե Բանկը, Պետությունը և Ստացողը այլ կերպ չհամաձայնեն, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Բանկը Պետությանը և Ստացողին ծանուցում կուղարկի առ այն, որ Բանկն ընդունում է այն ապացույցները, որոնք պահանջվում են սույն Համաձայնագրի Բաժին 7.02-ի (*Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները*) և Բաժին 7.03-ի (*Բրավաբանական եզրակացություն*) համաձայն:

### Բաժին 7.02 Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնի, մինչև Բանկը բավարար ապացույց չունենա առ այն, որ սույն Համաձայնագրի Բաժին 5.01(a)-ում (*Կասեցում*) կամ Բաժին 5.05-ում (*Փոխհատուցման դեպքերը*) նշված դեպքերից ոչ մեկը տեղի չի ունեցել և չի շարունակվում, և մինչև Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ չկատարվեն ստորև բերված՝ նախորդող բոլոր պայմանները, կամ մինչև Բանկը՝ իր բացառիկ հայեցողությամբ, դրանցից չհրաժարվի ամբողջությամբ կամ մասնակիորեն, պայմաններին ենթակա կամ անվերապահորեն՝

(a) Բանկը պետք է ստացած լինի սույն Համաձայնագրի երկու բնօրինակ՝ պատշաճ կերպով ձևակերպված,

(b) Վարկային Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները, Ստանդարտ պայմանների Բաժին 9.02-ի (*Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմաններ*) և Վարկային Համաձայնագրի Բաժին 5.03-ի (*Տրնաշ Բ-ի օգտագործմանը նախորդող պայմաններ*) համաձայն պետք է կատարված լինեն Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ, բացառությամբ միայն սույն Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու պայմանի,

(c) Բանկը պետք է, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ, ապացույցներ ստացած լինի առ այն, որ սույն Համաձայնագրի ձևակերպումն ու կատարումը Պետության և Ստացողի կողմից պատշաճ կերպով լիազորվել կամ վավերացվել են բոլոր անհրաժեշտ կառավարական, վարչական և կորպորատիվ գործողությունների արդյունքում,

(d) Բանկին տրամադրվել են բոլոր այլ փաստաթղթերը, որոնք նա որոշամիտ սահմաններում պահանջել է:

### **Բաժին 7.03 Իրավաբանական եզրակացություն**

Որպես սույն Համաձայնագրի Բաժին 7.02-ի (*Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմաններ*) համաձայն ներկայացվելիք ապացույցների մի մաս, թե՛ Պետությունը, և թե՛ Ստացողը պետք է ներկայացնեն կամ կազմակերպեն, որպեսզի սույն Համաձայնագրի վերաբերյալ ներկայացվի իրավաբանական եզրակացություն, Բանկի համար բավարար ձևով և բովանդակությամբ, Պետության անունից՝ Արդարադատության նախարարի կողմից, իսկ Ստացողի անունից՝ իրավաբանական բաժնի ղեկավարի կողմից և այն պետք է հաստատի, որ սույն Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ վավերացվել է և ձևակերպվել և հանձնվել է Պետության և Ստացողի անունից և հանդիսանում է Պետության և Ստացողի համար վավեր և իրավաբանական պարտադիր ուժ ունեցող պարտավորություն, որը կիրառելի է իր պայմանների համաձայն:

### **Բաժին 7.04 Ուժի մեջ չմտնելու պատճառով դադարեցում**

Եթե սույն Համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից սկսած 90 օրացուցային օրվա ընթացքում, ապա սույն Համաձայնագրի ներքո Բանկի բոլոր պարտավորությունները կդադարեն, եթե Բանկը, հետաձգման պատճառները քննելուց հետո, չսահմանի ավելի ուշ ամսաթիվ սույն Բաժնի նպատակների համար: Բանկը պետք է անհապաղ տեղեկացնի Պետությանը և Ստացողին այդ՝ ավելի ուշ ամսաթվի մասին:

### **Բաժին 7.05 Կատարման արդյունքում դադարեցում**

(a) Սույն Համաձայնագիրը կշարունակի ուժի մեջ մնալ մինչև Պետությունը և Ստացողը չկատարեն իրենց բոլոր համապատասխան պարտավորությունները՝ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն, եթե այն ավելի շուտ չդադարեցվի իր պայմանների համաձայն, սակայն պայմանով, որ Բաժին 6.03-ի (*Վեճերի լուծում*) դրույթները պետք է շարունակեն ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրի դադարեցումից հետո:

(b) Անկախ սույն Համաձայնագրում որևէ հակառակն հավաստող դրույթի, Բաժին 5.05(d)-ի դրույթները (*Փոխհատուցման դեպքեր*) պետք է շարունակեն ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրի դադարեցումից հետո՝ Ծրագրի ավարտի ամսաթվից հինգ (5) տարվա ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ VIII - ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

### Բաժին 8.01 Ծանուցումներ

Սույն Համաձայնագրի ներքո պահանջվող կամ թույլատրվող ցանկացած ծանուցում կամ խնդրանք պետք է գրավոր լինի: Եթե սույն Համաձայնագրի Բաժին 7.01-ում (*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը*) այլ բան նախատեսված չէ, ապա համարվում է, որ նման ծանուցումը կամ խնդրանքը ներկայացվել է պատշաճ կերպով, եթե այն հանձնվել է համապատասխան կողմին՝ նշված հասցեով կամ այնպիսի այլ հասցեով, որին մասին այդ կողմը գրավոր տեղեկացրել է ծանուցումը կամ խնդրանքը ներկայացնող կողմին: Եթե սույն Համաձայնագրում կամ ՎԶԵԲ-ի՝ Մասհանումների տրամադրման ուղեցույցում այլ բան նախատեսված չէ, ապա ծանուցումը կարելի է հանձնել առձեռն, ուղարկել փոստով կամ ֆաքսիմիլային հաղորդման միջոցով: Ֆաքսի միջոցով կատարվող առաքումները նաև հաստատվեն փոստով:

#### Ստացողի համար՝

Հայաստան  
Գյումրի 3104  
Վարդանանց հրապարակ, 2.1  
Գյումրու քաղաքապետարան

Ուղղվում է Քաղաքապետին

Ֆաքս՝ +374 31 23 26 06

#### Պետության համար՝

Հայաստանի Հանրապետություն,  
Երևան, 0010  
Մելիք-Ադամյան փող., 2. 1,  
Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն

Ուղղվում է Միջազգային համագործակցության բաժնին

Ֆաքս՝ + 374 11 800 132

#### Բանկի համար՝

Միացյալ թագավորություն,

Լոնդոն EC2A 2JN,  
Ուան Իքսչենջ Սթրիթ,  
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ուղղվում է Գործառնությունների վարչարարության բաժնին

Ֆաքս՝ +44 20 7338 6100

## **Բաժին 8.02 Գործելու լիազորություն**

Սույն Համաձայնագրի ներքո Պետության կամ Ստացողի կողմից պահանջվող կամ թույլատրված ցանկացած գործողություն և սույն Համաձայնագրի ներքո պահանջվող կամ թույլատրված ցանկացած փաստաթուղթ պետք է իրականացվի կամ ձևակերպվի Պետության լիազոր ներկայացուցչի և Ստացողի լիազոր ներկայացուցչի կողմից՝ կախված դեպքից, կամ Պետության և Ստացողի այլ պաշտոնատար անձանց կողմից, ում ցանկացած լիազոր ներկայացուցիչ կարող է նշանակել գրավոր կերպով: Պետությունը և Ստացողը Բանկին պետք է ներկայացնեն լիազորված պաշտոնյայի լիազորության ապացույցը և նրա լիազորված ստորագրության նմուշը՝ համաձայն Նմուշ 2-ում ներկայացված ձևի (*Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի ձևաթուղթ*):

## **Բաժին 8.03 փոփոխություններ**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել գրավոր փաստաթղթով, որը ստորագրվել է Պետության լիազոր ներկայացուցչի, Ստացողի լիազոր ներկայացուցչի և Բանկի՝ պատշաճ կերպով լիազորված պաշտոնատար անձի կողմից:

## **Բաժին 8.04 Անգլերենը**

Սույն Համաձայնագիրը պատրաստվել և ձևակերպվել է անգլերենով: Սույն Համաձայնագրի համաձայն ներկայացված ցանկացած փաստաթուղթ պետք է անգլերենով լինի: Ցանկացած այլ լեզվով փաստաթղթերը պետք է ուղեկցվեն հաստատված անգլերեն թարգմանությամբ, և այդ հաստատված թարգմանությունը վերջնական է:

## **Բաժին 8.05 Փոխհատուցում**

(a) Պետությունը և Ստացողը պարտավորվում են լիակատար պատասխանատվություն ստանձնել և համաձայն են փոխհատուցել և զերծ պահել Բանկը և նրա պաշտոնյաներին, տնօրեններին, աշխատակիցներին, գործակալներին և ծառայողներին որևէ և բոլոր պարտավորություններից, պարտականություններից, կորուստներից, վնասներից (փոխհատուցումներից, պատժիչ կամ այլ վնասներից), տուգանքներից, պահանջներից, գործողություններից, հարկերից, հայցերից, ծախսերից և ծախսումներից (այդ թվում՝ իրավաբանական խորհրդատվության ողջամիտ վճարներից և հետաքննության ծախսերից), ինչպիսիք էլ դրանք լինեն, ներառյալ՝ չխախտելով վերոհիշյալի համընդհանրությունը, նրանք, որոնք առաջանում են ըստ պայմանագրի կամ դելիկտի արդյունքում (ներառյալ՝ անփութության հետևանքով) կամ խիստ պատասխանատվության արդյունքում կամ այլ կերպ, որոնք պարտադրվում, բերվում կամ հայտարարվում են Բանկին կամ նրա պաշտոնյաներին, տնօրեններին, աշխատողներին, գործակալներին կամ ծառայողներին (անկախ նրանից, թե դա նույնպես փոխհատուցվում է որևէ այլ անձի կողմից որևէ այլ փաստաթղթի ներքո) և որոնք որևէ կերպ կապված են հետևյալի հետ կամ առաջանում են, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, հետևյալից.

- (1) սույն Համաձայնագրով նախատեսված գործարքներից որևէ մեկից կամ դրա ձևակերպումից, հանձնումից կամ կատարումից,
- (2) Ստացողի օբյեկտների շահագործումից կամ տեխսպասարկումից կամ Ստացողի՝ սեփականության իրավունքից, վերահսկումից կամ նրան պատկանելուց, կամ
- (3) Բանկի կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում իր որևէ իրավունքների և պաշտպանության միջոցների կիրառումից, և

պայմանով, որ Բանկը չպետք է իրավունք ունենա հատուցում ստանալու իր սեփական կոպիտ անփութության կամ կանխամտածված խախտման համար:

(b) Պետությունը և Ստացողը ընդունում են, որ Բանկը կնքում է սույն Համաձայնագիրը և գործում է միայն որպես դրամաշնորհ տրամադրող, այլ ոչ թե Պետության կամ Ստացողի խորհրդատու: Պետությունը և Ստացողը ներկայացնում և երաշխավորում են, որ սույն Համաձայնագիրը կնքելիս, նրանք ներգրավել և հենվել են իրենց սեփական իրավական, ֆինանսական և այլ մասնագիտական խորհրդատուների խորհուրդների վրա, և այսուհետ նույնպես չեն ապավինելու Բանկի կողմից տրված որևէ խորհուրդներին:



## **Բաժին 8.06 Հանձնարարություններ**

Պետությունն ու Ստացողը չպետք է սույն Համաձայնագրով սահմանված իրենց իրավունքներից կամ պարտավորություններից որևէ մեկը հանձնարարեն կամ այլ կերպ փոխանցեն առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

## **Բաժին 8.07 Իրավունքները, պաշտպանության միջոցները և հրաժարումները**

Սույն Համաձայնագրի ներքո՝ Բանկի իրավունքներն ու պաշտպանության միջոցները չպետք է տուժեն որևէ գործողությունից կամ որևէ բանից, որը կարող է, բացի սույն Բաժնից, սահմանափակել այդ իրավունքներն ու պաշտպանության միջոցները: Ոչ մի գործարար ընթացք և Բանկի իրավունքների, լիազորությունների կամ պաշտպանության միջոցների կիրառման ոչ մի հետաձգում կամ չկիրառում չպետք է վնաս պատճառի որևէ նման իրավունքին, լիազորությանը կամ պաշտպանության միջոցին կամ ընկալվի որպես դրանից հրաժարում: Սույն Համաձայնագրի որևէ պայմաններից հրաժարումը պետք է լինի գրավոր և Բանկի կողմից ստորագրված: Եթե Բանկը հրաժարվում է Դրամաշնորհային ֆինանսավորման Մասհանման որևէ պայմանից, ապա պետք է համարվի, որ Ստացողը՝ ստանալով այդ Մասհանումը, համաձայնել է այդ հրաժարման պայմաններին, և Բանկի՝ այդ պայմանի կատարումը պահանջելու իրավունքը պետք է բացահայտորեն պահպանվի յուրաքանչյուր հետագա Մասհանման նպատակներով: Սույն Համաձայնագրով և սույնում նշված այլ համաձայնագրերով նախատեսված իրավունքներն ու պաշտպանության միջոցները կուտակային են և չպետք է խոչընդոտեն դրանց այլ կամ հետագա կիրառումը կամ որևէ այլ իրավունքի կամ պաշտպանության միջոցի կիրառումը:

## **Բաժին 8.08 Բացահայտում**

Բանկը կարող է բացահայտել Պետությանն ու Ստացողին և այս գործարքին վերաբերող այնպիսի փաստաթղթեր, տեղեկություններ և հաշվառումներ (ներառյալ՝ սույն Համաձայնագրի, Ծրագրի համաձայնագրի և սույնով նախատեսված ցանկացած այլ համաձայնագրերի պատճենները), որոնք Բանկը նպատակահարմար կհամարի ցանկացած նպատակների համար. կապված ցանկացած վեճի հետ, որտեղ ներգրավված են Պետությունը և Ստացողը, սույն Համաձայնագրի կամ սույնով նախատեսված ցանկացած այլ համաձայնագրի շրջանակներում Բանկի իրավունքներից որևէ մեկի պահպանման կամ իրականացման նպատակով, կամ Բանկին վճարման ենթակա ցանկացած գումար ստանալու և Հիմնադրամի կանոնադրության համաձայն հաշվետվությունների տրամադրման նպատակով:

### **Բաժին 8.09 Կրկնօրինակները**

Սույն Համաձայնագիրը կարող է կնքվել ցանկացած թվով կրկնօրինակներով, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, բայց բոլորը միասին հանդիսանում են միևնույն համաձայնագիրը:

**Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ**, կողմերը՝ գործելով իրենց՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը չորս օրինակից վերը նշված ամսաթվին:

#### **ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

Անուն՝ [Սամվել Բալասանյան]  
Պաշտոն՝ Գյումրու քաղաքապետ

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

---

Անուն՝ [Ատոմ Զանջուղազյան]  
Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

#### **ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

---

Անուն՝ [Դիմիտրի Գվինդաձե]  
Պաշտոն՝ Ասոցացված տնօրեն, Հայաստանի հարցերով ղեկավար

## ԱՌԴԻՐ 1 - ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Սույն Առդիբում ներկայացված աղյուսակը սահմանում է Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչները և Դրամաշնորհից ֆինանսավորվող յուրաքանչյուր բաղադրիչի համար հատկացված Դրամաշնորհային ֆինանսավորման գումարը:

	<b>Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչներ</b>	<b>Դրամաշնորհային ֆինանսավորման՝ հատկացված գումարը եվրոյով</b>
1	Ընտրված ճանապարհների վերակառուցում (ներառյալ մայթերը և դրենաժային ցանցը, ճանապարհային անվտանգության աշխատանքները և LED՝ լուսադիոդային լուսատուների և փողոցային լուսավորության այլ սարքավորումները տեղադրումը) - մի քանի լոտ - տրանշ Բ)	2,650,000
	<b>Ընդամենը</b>	<b>2,650,000</b>

## ՆՄՈՒՇ 1 – ՄԱՍՀԱՄՆՄԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ

[Պետք է տպվի Նախարարության պաշտոնական բլանկի վրա]

[Ամսաթիվ]

Միացյալ թագավորություն,  
Լոնդոն EC2A 2JN,  
Ուան Իքսչեյջ Սթրիթ,  
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ուղվում է Գործառնությունների վարչարարության բաժնին

**Գործառնություն թիվ 46540 (Բաժնետերերի հատուկ հիմնադրամ՝  
Դրամաշնորհային բողաղրիչ – Տրանշ B)  
Մասհամման հատկացման դիմում թիվ [1]**

**Թեմա՝ Դրամաշնորհային Համաձայնագիր \_\_\_\_\_-ով թվագրված,  
Գյումրու քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության և  
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև («Բանկ»):**

Սույնով խնդրում ենք տրամադրել հետևյալ Մասհանումը՝ վերը նշված  
Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համապատասխան.

Դրամաշնորհի արժույթը՝	ԵՎԸՈ
Պահանջվող վճարման արժույթը	[2]
Ֆինանսավորված գումար/-ներ/արժույթը	[3]
Արժույթի գնահատման ամսաթիվը՝	[4]
Ենթակա է վճարման (գումար ստացողը):	[5]

Շահառուի հաշվի անունը՝	[6]
Շահառուի հաշվեհամարը՝	[7]
Շահառուի բանկի անունը՝	[8]
Շահառուի բանկի հասցեն՝	[9]

**Շահառուի բանկի՝ թղթակից բանկի տվյալները.**

Թղթակից բանկի անունը՝	[10]
Հասցեն՝	[11]
Հաշվի անունը՝	[12]
Հաշվեհամարը՝	[13]

Տեղեկանք վճարման մասին [14]

Շահառուի էլ-փոստի հասցեն [15]

Սույնով հավաստում ենք, որ մենք նախկինում չենք խնդրել Մասհանում տրամադրել Դրամաշնորհային ֆինանսավորումից՝ այս ծախսերը հոգալու համար: Մենք չենք ստացել և մտադիր չենք որևէ այլ դրամաշնորհից, փոխառությունից կամ վարկից այդ նպատակով միջոցներ ստանալ:

Սույն խնդրանքում ներառված ապրանքներն ու ծառայությունները գնվել կամ գնվում են՝ համաձայն Դրամաշնորհային համաձայնագրի պայմանների:

*[Բաժին 2.02 (c)-ի (Մասհանման տրամադրմանը նախորդող պայմաններ) պահանջներին համապատասխանությունը երաշխավորելու համար օգտագործել ք Բաժին 2.02 (c)-ի համապատասխան պարբերության՝ (1) կամ (2)-ի ձևակերպումները: ]*

Սույնով հավաստում ենք ՎՁԵԲ-ին, որ (i) մենք կատարում ենք Դրամաշնորհային համաձայնագրում և Վարկային համաձայնագրում սահմանված՝ մեր պարտավորությունները և (ii) որևէ դեպք տեղի չի ունեցել, որը կարող է նյութապես և բացասաբար ազդել մեր գործառնությունների կամ ֆինանսական վիճակի վրա, կամ մեր՝ Ծրագրի իրականացման կարողության կամ Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում մեր պարտականություններից որևէ մեկի կատարման վրա:

Հարգանքներով՝

[16]

---

Անուն՝  
Պաշտոն՝

Ներդիրներ՝ - Ամփոփաթերթերի ընդհանուր քանակը՝ [17]

- Փաստաթղթերի ընդհանուր քանակը՝ [18]

## **Ծանոթագրություն՝ Մասհանման հատկացման դիմումի ձևը լրացնելու վերաբերյալ**

[1] Պետությունը պետք է թվագրի յուրաքանչյուր դիմում: Դրամաշնորհային մասհանման տրամադրման առաջին դիմումը կլինի թիվ 1, հետևյալ դիմումները՝ 2, 3 և այլն: Ստացողը պետք է հետևի Դրամաշնորհային մասհանումների բոլոր դիմումների համարներին, որոնք նա ներկայացրել է տվյալ Դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում: Դիմումի ձևերը պետք է համարակալված լինեն նույն հաջորդական թվային համակարգով, անկախ այն բանից, թե արդյոք դրանք ուղղակի վճարման մասհանման թե փոխհատուցման պարտավորության տրամադրման համար են: Թվային այս համակարգի օգտագործումը թույլ է տալիս խուսափել շփոթմունքից, եթե ձևերը երկար մնում են փոստում կամ մեկ անգամից ավելի են ֆաքսով ուղարկվում, և այլն:

[2] Խնդրում ենք նշել արժույթը, որով պահանջվում է անել փաստացի վճարումը: Դա կլինի կամ դրամաշնորհի արժույթը, կամ ծախսերի արժույթը (տե՛ս ստորև բերված՝ [3]-րդ կետը): Այլապես, որոշ դեպքերում, Բանկը կարող է համաձայնվել վճարել երրորդ արժույթով, որի դեպքում այդ արժույթը ձեռք բերելու համար Բանկը կգործի որպես Ստացողի գործակալ:

Եթե վճարումը պահանջվում է մեկից ավելի արժույթով, ապա ամեն մի արժույթի համար պետք է օգտագործվի առանձին դիմում:

[3] Ֆինանսավորված գումարը(-ները) սկզբնական ծախսերն են, իրենց սզբնական արժույթով, ինչպես մանրամասն նկարագրված է ամփոփաթեթում, որոնք հաշվարկվում են դրամաշնորհային համաձայնագրում նշված՝ համապատասխան տոկոսով կիրառելի բաղադրիչի համար, որը ֆինանսավորվում է Դրամաշնորհի միջոցներից: Այստեղ ներկայացված գումարը(-ները) պետք է համապատասխանեն ամփոփաթեթի բաժին [15]-ի ընդհանուր գումարին(-ներին):

[4] Արժեքի գնահատման ամսաթիվը այն օրն է, երբ ՎԶԵԲ-ի հաշիվը դեբետագրվում է մասհանման գումարի չափով: ՎԶԵԲ-ը չի կարող երաշխավորել, որ շահառուի հաշիվը նույն ամսաթվին կստանա այդ գումարը, քանի որ դա կախված է վճարահաշվարկային համակարգում կամ շահառուի երկրի՝ ստացող բանկում ընդունված ընթացակարգերից: Պետք է թողնել առնվազն 15 աշխատանքային օր այն ամսաթվի միջև, երբ ՎԶԵԲ-ը ստանում է դիմումը, և արժեքի պահանջվող գնահատման ամսաթվի միջև: Եթե իրականում վճարումը հնարավորինս շուտ է անհրաժեշտ ստանալ, քան արժեքի գնահատման տվյալ ամսաթիվը, ավելի լավ է չնշել կոնկրետ ամսաթիվ, այլ նշել՝ «որքան հնարավոր է շուտ» այս դաշտում [4]: Այդ դեպքում ՎԶԵԲ-ը յուրաքանչյուր պարագայում վճարումը կանի 15 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն հնարավորության դեպքում՝ այդ ժամանակահատվածի առաջին օրերին: (Խնդրում ենք հաշվի առնել, որ վճարումը կարող է երաշխավորվել 15 աշխատանքային օրվա ընթացքում միայն եթե մասհանման հատկացման դիմումը ճիշտ է և ամբողջական:)

[5] Մասհանումը վճարվում է շահառուին: Սովորաբար դա Կապալառուն է, սակայն եթե Բանկը այլ գրավոր համաձայնություն է ձեռք բերել, և կից ներկայացվող

փաստաթղթերը (տես ամփոփաթերթիկը) ապացուցում են, որ Ստացողը արդեն վճարել է Կապալառուին, ապա վճարումն արվում է Ստացողին:

[6] Շահառուի հաշվի անունը դեպքերի մեծ մասում սովորաբար շահառուի անունն է:

[7] Շահառուի հաշվի համարը պահանջվում է ձգձգումներից խուսափելու համար: Մեծ թվով երկրներում բանկերը հրաժարվում են վճարումն անելուց, եթե շահառուի հաշվի համարը նշված չէ:

[8] Շահառուի բանկը այն բանկն է, որտեղ շահառուն հաշիվ ունի: Խնդրում ենք նշել բանկի անունը և քաղաքը:

[9] Հասցեի փոխարեն կարող եք նշել սրտավորման կոդը կամ SWIFT կոդը:

[10] Շահառուի բանկի թղթակից բանկի տվյալները պահանջվում են միայն այն դեպքում, եթե վճարումը չի կատարվել այն երկրի արժույթով, որտեղ գտնվում է շահառուի բանկը: Այդ դեպքում թղթակից բանկը այն բանկն է, որը գտնվում է վճարման արժույթի երկրում, որտեղ ստացողի բանկը հաշիվ ունի:

[11] Հասցեի փոխարեն կարելի է տրամադրել թղթակից բանկի ստրտավորման կոդը կամ SWIFT կոդը:

[12] Շահառուի բանկային հաշվի անունը դեպքերի մեծ մասում պարզապես շահառուի բանկի անունն է:

[13] Շահառուի բանկի հաշվեհամարն անհրաժեշտ է, եթե շահառուի բանկը ունի ավելի քան մեկ հաշիվ թղթակից բանկում, կամ եթե նա SWIFT-ի անդամ չէ (միջազգային էլեկտրոնային վճարման համակարգ): Այլապես, այս համարն օգտագար է, բայց ոչ պարտադիր: Որտեղ կիրառելի է, IBAN համարը (Միջազգային բանկային հաշվի համարը) պետք է նշվի:

[14] Վճարման մասին տեղեկանքը, որը ՎՋԵԲ-ը կուղարկի վճարման հետ միասին, օգնում է շահառուին նույնականացնել վճարումը: Եթե որևէ կոնկրետ տեղեկանք չի պահանջվում, ՎՋԵԲ-ը նշում է Ստացողի անունը և համաձայնագրի համարը:

[15] Վճարողի էլեկտրոնային փոստի հասցեն պահանջվում է, որպեսզի Բանկը շահառուին ուղարկի հիշեցումներ սպասվող վճարումների մասին՝ նախքան Բանկը կանի այդ վճարումները: Դա պետք է լինի էլեկտրոնային փոստի հասցե, որը շահառուն անձը պարբերաբար ստուգում է:

[16] Ստորագրություն: Դիմումի ամփոփաթերթը պետք է ստորագրվի Ստացողի կողմից կամ նրա անունից:

[17] Ամփոփաթերթում թվարկված են Մասհանման հատկացման դիմումին կից ներկայացվող՝ աջակցող բոլոր փաստաթղթերը: Եթե դրանք շատ են, ցանկալի է օգտագործել առանձին ամփոփաթերթ յուրաքանչյուր կատեգորիայի համար:



[18] Փաստաթղթերը (պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերը, ստացականները և այլն) պետք է համարակալվեն և ներկայացվեն նույն կարգով, որով դրանք նշված են ամփոփաթերթերում: Պետք է նշել նրանց ընդհանուր թիվը՝ ՎՁԵԲ-ի կողմից ստուգման գործընթացն արագացնելու համար:

Հրապարակման ոչ ենթակա նախագիծ  
 Ենթակա է փոփոխության

թիվ՝ j am gyu 9406  
 Նախագծի ամսաթիվը՝ 20/09/19

**ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

Ստացող Անունը՝  
 [1] .....

Գործառնություն Դիմում  
No : [3]..... No: [4] .....

Ամսաթիվ՝  
 [2] .....

Ամփոփաթերթ  
No : [5] .....

Մասհանում՝  
Դրամաշնորհից  
Ֆինանսավորվող  
բաղադրիչ [6] .....  
 (համարը/  
 անվանումը/ %)

Բաղադրիչ No	Բաղադրիչի նկարագրությունը	Պայմանագրի No. և ամսաթիվը	Կապալառուի անունը և հասցեն	Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համառոտ նկարագիր	Պայմանագրի արժույթը և ընդհանուր գումարը	Ընդունելի ծախսերի արժույթն ու գումարը	Ֆինանսավորման գումարը՝ ծախսերի արժույթով
[7]	[8]	[9]	[10]	[11]	[12]	[13]	[14]

--	--	--	--	--	--	--	--

**Ստորագրություն**

[16].....

ԸՆԴԱՄԵՆԸ՝ ըստ արժույթի

**[15]**

.....  
 .....

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍՀԱՄՆՄԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

[1] Անունը: Ստացողի անունը: Սա պետք է լինի նույնը, ինչ Մասհանման հատկացման դիմումի ձևում, որին պատկանում է այս ամփոփաթեթը:

[2] Ամսաթիվ: Դիմումի ամսաթիվը: Սա պետք է լինի նույնը, ինչ Մասհանման հատկացման դիմումի ձևում, որին պատկանում է այս ամփոփաթեթը:

[3] Գործառնության համարը: Այս թիվը նույնն է, ինչ Մասհանման հատկացման դիմումի ձևում, որին պատկանում է այս ամփոփաթեթը:

[4] Դիմումի համարը: Սա Մասհանման հատկացման դիմումի ձևի համարն է, որին պատկանում է այս ամփոփաթեթը:

[5] Ամփոփաթեթի համարը: Մասհանման հատկացման յուրաքանչյուր դիմումի համար, ամփոփաթեթերը պետք է համարակալված լինեն՝ սկսած 1-ից, իսկ նրանց ընդհանուր թիվը պետք է նշված լինի Մասհանման հատկացման դիմումի ձևում, որին նրանք պատկանում են:

[6] Մասհանում՝ Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչ: Սա ծրագրի համար դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչ է, որը ֆինանսավորվելու է պահանջվող Մասհանման գումարներից: Խնդրում ենք Դրամաշնորհային համաձայնագրում գնտել Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչի անվանումը և հղման համարը, ինչպես նաև ֆինանսավորվելիք ծախսերի տոկոսը (օրինակ, «Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչ՝ # (3բ), սարքավորում, 60%»):

Եթե Մասհանման հատկացման մեկ դիմումը ներառում է մեկից ավելի Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչի ծախսերը, ապա Դրամաշնորհից ֆինանսավորվող յուրաքանչյուր բաղադրիչի համար պետք է օգտագործվի առանձին ամփոփաթեթիկ:

[7] Բաղադրիչի համարը: Բոլոր փաստաթղթերը (հաշիվ-ապրանքագրերը, պայմանագրերը, ստացականները և այլն) պետք է ներկայացվեն նույն կարգով, որով դրանք հայտնվում են ամփոփաթեթում: Նույնականացման հեշտացման համար փաստաթղթերը պետք է համարակալվեն՝ սկսած 1, 2, 3-ից և այլն, յուրաքանչյուր նոր Մասհանման դիմումի համար, և այդ թիվը պետք է հստակ նշված լինի փաստաթղթի վրա: Բոլոր ամփոփաթեթերի ընդհանուր թվաքանակը նշվում է Մասհանման հատկացման դիմումի մեջ:

[8] Բաղադրիչի նկարագրությունը. Խնդրում ենք նկարագրել յուրաքանչյուր բաղադրիչը, օրինակ՝ «հաշիվ-ապրանքագիր», «ստացական», «ինժեների տեղեկանք», «[...]»-ի թարգմանություն» և այլն:

[9] Պայմանագրի համարը և ամսաթիվը: Խորհուրդ է տրվում, որ պայմանագրին տրվի սկզբնական համար, երբ այն կնքվի Ստացողի և Կապալառուի միջև: ՎԶԵԲ-ը այս համարը կընդունի սեփական հաշվառման համար: Եթե պայմանագիրը չի ստացել

սկզբնական համար, ապա ՎՋԵԲ-ը նրան համար կհատկացնի և հաստատման պահին կտեղեկացնի Ստացողին: Եթե Ստացողը չիմանա համարը ամփոփաթեթը լրացնելու պահին, ապա այս մասը կարող է բաց մնալ, և ՎՋԵԲ-ը այն կլրացնի:

Այս սյունակում նույնպես պետք է նշվի պայմանագրի/գնման օրդերի ամսաթիվը:

Ծանոթագրություն. Նույն պայմանագիրը կարող է հայտնվել Մասհնման հատկացման մեկից ավելի դիմումում, եթե ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների մատակարարումը (տե՛ս [11]), և, հետևաբար, այդ ապրանքների և այլի համար վճարումը կատարվում է փուլերով:

[10] Կապալառուի անունը և հասցեն: Պայմանագրում/գնման օրդերում [9]-ի նհամաձայն կարագրված կողմի (Կապալառուի) անունը և հասցեն:

[11] Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ամփոփ նկարագիրը: Այդ ապրանքները, աշխատանքները կամ ծառայությունները պետք է համապատասխանեն Պայմանագրում կամ ներկայացված այլ փաստաթղթերում ներկայացված մանրամասներին և պետք է պատկանեն [6]-ում նշված՝ Դրամաշնորհից ֆինանսավորվող բաղադրիչների շարքին:

[12] Պայմանագրի արժույթը և ընդհանուր գումարը: [9]-ում նշված պայմանագրի ընդհանուր գումարը բնօրինակ արժույթով:

[13] Թույլատրելի ծախսերի արժույթը և գումարը: Յուրաքանչյուր ծախսի համար՝վճարված կամ վճարման ենթակա ընդհանուր գումարը, բնօրինակ արժույթով, ինչպես ներկայացված է հաշիվ-ապրանքագրերում կամ [7]-ում և [8]-ում թվակրված այլ փաստաթղթերում: Երբ յուրաքանչյուր ծախսի համար մեկից ավելի «բաղադրիչ» գոյություն ունի (օրինակ՝ հաշիվ-ապրանքագիր, վկայական և ստացական, բոլորը՝ նույն ծախսման համար), ապա այդ բաղադրիչները պետք է գրվեն փակագծերում, իսկ սյունակում պետք է միայն մեկ գումար երևա:

[14] Ֆինանսավորման գումարը: [13]-րդ սյունակում թվարկված յուրաքանչյուր գումարի համար սույն սյունակում՝ [14]-ում, պետք է լինի համապատասխան գումար, որը հաշվարկվում է [6]-ում նշված տոկոսադրույքով և համապատասխանում է այս ամփոփաթեթի կատեգորիային: Ֆինանսավորման գումարը պետք է լինի պայմանագրի և ծախսերի բնօրինակ արժույթով (սյունակներ 12 և 13): Սա կարող է լինել կամ չլինել վարկի արժույթով կամ վճարման արժույթով:

[15] Ընդամենը: Ֆինանսավորման գումարները, ինչպես նշված են [14]-ում, պետք է գումարվեն՝ դառնալով մեկ ընդհանուր գումար ըստ յուրաքանչյուր արժույթի: Ուղղակի Մասհնման դիմումների համար, այստեղ տրված գումարը (-ները) պետք է համապատասխանեն ուղղակի Մասհանման դիմումի ձևի [9]-ում տրված գումարին:

[16] Ստորագրություն: Դիմումի ամփոփաթեթը պետք է ստորագրվի Ստացողի կողմից կամ նրա անունից: Տե՛ս ստորագրության նկատմամբ պահանջները Մասհանման դիմումի ձևում:

**ՆՄՈՒՇ 2 – ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ  
ՆԱՄԱԿԻ ՁԵՎԸ**

[Պետք է տպված լինի Նախարարության պաշտոնական բլանկի վրա]

[Ամսաթիվ]

Միացյալ թագավորություն,  
Լոնդոն EC2A 2JN,  
Ուան Իքսչեյջ Սթրիտ,  
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ուղվում է Գործառնությունների վարչարարության բաժնին

Թեմա՝ Գործառնություն No. [ ] (Բաժնետերերի հատուկ հիմնադրամ՝  
Դրամաշնորհային Բաղադրիչ – Տրանշ B)  
Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակ<sup>7</sup>

Հարգելի պարոն/տիկին,

[Պետության], [Ստացողի] և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի («Բանկ») միջև [ամսաթիվ]-ով թվագրված՝ դրամաշնորհային համաձայնագրի կապակցությամբ («Դրամաշնորհային համաձայնագիր») տեղեկացնում ենք, որ ցանկացած անձ, ում վավերացված ստորագրությունների նմուշները բերված են ստորև, լիազորված է Պետության/Ստացողի անունից ստորագրելու [Մասհանման տրամադրման դիմումները և [որևէ [այլ]] ծանուցումներ կամ փաստաթղթեր], որոնք պահանջվում կամ թույլատրվում է ստորագրել վերը նշված Դրամաշնորհային համաձայնագրի ներքո:

**ԱՆՈՒՆ**

**ՊԱՇՏՈՆ**

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇԸ**

_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

<sup>7</sup>Պետությունը/Ստացողը կարող են ցանկացած պահի փոխել նշանակումը՝ Բանկին տրամադրելով Լիազորված ստորագրողների նշանակման մասին նոր նամակ:

Վերոհիշյալ Դրամաշնորհային համաձայնագրի ներքո Պետության անունից ստորագրելու լիազորություն ունեցող պաշտոնյաների ստորագրությունները տրամադրող բոլոր նախորդ ծանուցումները սույնով ուժը կորցրած են ճանաչվում:  
Հարգանքով,

**Հայաստանի Հանրապետության  
համար և նրա անունից**

---

Անունը՝

Պաշտոնը՝

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

- Վերը նշված՝ լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակը պետք է ստորագրվի Պետության անունից իր՝ համապատասխան լիազորված ներկայացուցչի կողմից: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Դրամաշնորհային համաձայնագրի Բաժին 2.02-ի կամ 2.03-ի դրույթների համաձայն պահանջվող կամ թույլատրվող ցանկացած գործողության առնչությամբ, վերը բերված՝ լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակը պետք է ստորագրվի Պետության անունից՝ Պետության լիազորված ստորագրողի կողմից:

- Այն դեպքում, երբ յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրվի ավելի քան մեկ պաշտոնյայի կողմից, լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակում դա պետք է հստակ նշված լինի, և առաջին նախադասությունը պետք է, հետևաբար, համապատասխանեցվի:

Եթե լիազորված ստորագրողները բաժանվում են երկու խմբի, և պահանջվում է յուրաքանչյուր խմբի պաշտոնյայի ստորագրությունը, ապա դա նույնպես պետք է հստակ բացատրվի նամակում: